Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացմանապահովում» ծրագիր

Հետազոտական աշխատանք

Դպրոց՝ «Ոսկեվանի միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ

Թեմա՝ «Միջառարկայական կապերի հաստատումը ռուսաց լեզվի դասավանդման գործընթացում»

Մենթոր՝ Նաիրա Ամանյան

Ուսուցիչ՝ Գոհար Տիրացվյան

2023

Բովանդակություն

Ներածություն_____3
Գրական ակնարկ_____5
Միջառարկայականության կամ ինտեգրման սկզբունքը_____7
Միջառարկայական կապերի տեսակները_____7
Ինտեգրված դաս_____9
Ինտեգրված դասի տեսակները_____11
Փորձարարական մաս_____14
Դաս 1_____14
Դաս 2_____15
Եզրակացություն_____18
Առաջարկություններ_____19
Օգտագործված գրականության ցանկ_____20

Ներածություն

« *Ուսուցիչը միշտ ձգտում է ուսուցանվող նյութը մանրացնել, մասնատել, բաժին-բաժին մատուցել, այն դեպքում, երբ երեխային այն ընդհանուր ու ամբողջական է հետաքրքիր»:*

Լ. Ն. Տոլստոյ

Թեմայի արդիականությունը

Ներկայումս հասարակական կյանքի բոլոր բնագավառներում տեղի ունեցող ինտեգրման գործընթացները չեն կարող «անտարբեր՝ անցնել դպրոցի կողքով: Դպրոցի միկրոաշխարհը պիտի համապատասխանի այն աշխարհին, ուր ապրում ու գործում է շրջանավարտը;

Կրթության բովանդակությունն առանձին առարկաներից պատրաստի գիտելիքների ամբողջություն չէ :Այսպիսի ընկալումը չի համապատասխանում ժամանակակից պահանջներին և աշխարհի մասին մասնատված, ոչ ամբողջական պատկերացում է տալիս: Այս խնդրի հնարավոր լուծումներից մեկը ինտեգրված՝ միասնական, ուսումնական և թեմատիկ ծրագրերի, դասընթացների ու պլանների ստեղծումն է: Երևույթների ընկալման, գիտակցման ու ըմբռնման առումով այսպիսի միասնական մոտեցումը հնարավորություն է տալիս նվազագույնի հասցնել գիտելիքների աղճատվածությունը, առարկաների ինքնորոշվածությունը, միջառարկայական կապերի բացակայությունը: Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս աշխարհը տեսնել ամբողջական, ընկալել դրանում առկա ներքին և արտաքին բազմապիսի կապերը , փոխհարաբերություններն ու փոխազդեցությունները, նպաստավոր միջոցներ է ստեղծում ուսուցումն արդյունավետ և «կյանքի վրա հիմնված» դարձնելու համար:

Մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում առարկաների և գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապերը:

Այսօր հանրակրթական կրթական չափորոշիչները պահանջում են կրթության և դաստիարակության ներդաշնակ զուգակցում, սովորողների զարգացման և բարեկրթության մակարդակի բարձրացում, աշակերտների ստեղծագործական մտածողության, գիտելիքների համալրման կարողության ձևավորում:

Այսօրվա գիտակրթական զարգացման արդի պահանջն է նաև օտար լեզուների իմացությունը: Ռուսաց լեզուն համարվում է ոչ միայն Ռուսաստանի Դաշնության պետական լեզուն, այլ նաև միջազգային լեզու է: Մեր կրթական համակարգում ռուսերենը առանձնահատուկ տեղ ունի անձի ձևավորման, նրա մտավոր առաջընթացի, վերլուծական և պատկերավոր մտածողության, զարգացման և աշխարհաճանաչողության մեջ:

Ռուսաց լեզվի դասավանդումն իրականացնում է ուսուցիչը՝ այդ ընթացքում աշակերտներին հաղորդում է մարդկության կուտակած սոցիալ-մշակութային փորձը, զարգացնում նրանց ճանաչողական գործունեությունը:

Ուսուցման գործընթացն անհնար է առանց ուսուցչի և աշակերտի միաժամանակյա գործունեության, որի ընթացքում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են:

Հետազոտության նպատակը

Ուսումնասիրել ռուսաց լեզվով հաղորդակցվելու արդյունավետության բարձրացումը դասավանդման գործընթացում ռուսաց լեզու- հայոց լեզու, ռուսաց լեզու լեզու – պատմություն միջառարկայական կապերի միջոցով:

Հետազոտական հարց.

Արդյո՞ք հնարավոր է աշակերտների մոտ ռուսաց լեզու – հայոց լեզու, ռուսաց լեզու – պատմություն միջառարկայական կապերի կիրառմամբ բարձրացնել ռուսաց լեզվով հաղորդակցվելու հմտության և ուսումնալան նյութի յուրացման մակարդակը:

Հետազոտության խնդիրները.

1. Ապահովել ռուսաց լեզու – պատմություն – հայոց լեզու միջառարկայական կապը ՝ երկխոսությունների միջոցով:
2. Դասապրոցեսում կիրառել բանալի բառերի թարգմանությունը և ստուգաբանությունը:

3. Իրականացնել ՏՀՏ գործիքների կիրառմամբ միջառարկայական կապով դասեր և կատարել վերլուծություն:

Գրական ակնարկ

Ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են: Միջառարկայական կապերի մասին Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ»: Տեղեկատվական հաղորդակման տեխնոլոգիաների և օտար լեզուների դասաժամերին ուսուցումը պետք է կազմակերպել այնպես, որ կատարելագործվեն սովորողների լեզվամտածողության ունակությունները ի նպաստ ստեղծագործական և քննադատական մտածողության: ՏՀՏ -ների և օտար լեզուների դասաժամերի մեծ մասը պետք է կազմակերպել մյուս առարկաների հետ օրգանական կապի մեջ, որը հնարավորություն կտա զարգացնելու սովորողների տարբեր կարողունակության որակներ: Միջառարկայական կապերի հաստատման նպատակն է ուսուցման գործընթացը կազմակերպել այնպես, որ այն նպաստի բնության օրենքների մասին սովորողների գիտական պատկերացումներն ամբողջական համակարգի մեջ տեսնելու կարողությունների ձևավորմանը: Միջառարկայական կապերը հնարավորություն են տալիս ստեղծել միասնական, ինտեգրված դասեր, որոնց ժամանակ երեխաներն աշխատում են հեշտությամբ և հետաքրքրությամբ՝ արդյունքում յուրացնելով մեծ ծավալով օգտակար նյութեր, ձեռք բերելով գիտակցված գիտելիքներ և ձևավորելով համադրելու, ընդհանրացնելու կարողություններ: Կարևոր է նաև այն, որ ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները կիրառվում են դպրոցականների կողմից իրենց գործունեության մեջ ոչ միայն ստանդարտ ուսումնական իրավիճակներում, այլև անծանոթ իրավիճակում ստեղծագործական դրսևորումների, գործնական գիտելիքի,

մտավոր ունակությունների դրսևորման ժամանակ: Միջառարկայական կապերը նպաստում են սովորողների ստեղծագործական, տրամաբանական և փոխաբերական մտածողության զարգացմանը, թույլ են տալիս նրանց կիրառել ստացած գիտելիքները իրական պայմաններում, հանդիսանում են անձնային հատկանիշների և ներքին մշակույթի դաստիարակության կարևոր գործոններից մեկը, որոնք ուղղված են բնության, մարդկանց, աշխատանքի և կյանքի հանդեպ բարի վերաբերմունքին: Ավագ դպրոցականների մեծամասնությունը ամբողջական, միասնական, բազմազան աշխարհի մասին ունեն մասնատված, հատվածական տեղեկություններ: Բովանդակությամբ մոտ ուսումնական առարկա- ների դասավանդման մասնատվածությունը, մեկուսացումը հանգեցնում է այն բանին, որ միանգամայն գրագետ լեզվով գրված աշակերտի շարադրությունը աշխարհի հետ ծանոթանալու ստեղծագործական աշխատանքի ընթացքի մեջ բազմաթիվ կոպիտ ճանաչողական սխալներ ունի: Այսպիսով, ավագ դպրոցականների լեզուների դասերի ընթացքում ուսուցման գիտական տեքստերի, գրական ընթերցանության ստեղծա- գործությունների, նկարների, դասագրքերի նկարազարդումների օգտագործման, երաժշտական ուղեկցության շնորհիվ ստեղծագործական մթնոլորտի ստեղծումը թույլ է տալիս ստեղծել հետաքրքիր, արդյունավետ, կառուցողական իրավիճակ և խուսափել լեզվական, բանավոր և գրավոր խոսքի զարգացման վարժությունների ձևական կատարումից:

Սովորողների մոտ զարգացնելով խոսքային իրավիճակի բովանդակությունն ու ձևը հարաբերակցելու ունակություն, միջառարկայական բառապաշարի հիման վրա կատարվող վարժությունները դաստիարակում են մտածողությունը, սրում մայրենի և օտար լեզվի զգացողությունը, սովորեցնում են ճկուն օգտագործել դրանք՝ ընտրելով մի քանի խոսքային տարբերակներից մեկը, որն առավել հարմար է իրավիճակը ճիշտ ու ամբողջական ներկայացնելու պահանջին: Միջառարկայական կապերի իրականացումը պահանջում է ուսուցիչների կողմից ուսումնական և արտադասարանական աշխատանքների համալիր ձևերի համատեղ պլանավորում, լրացուցիչ ուսումնական աշխատանք, ինչը ենթադրում է նրանց կողմից հարակից առարկաների ծրագրերի և դասագրքերի իմացություն:

Միջառարկայականության կամ ինտեգրման սկզբունքը

Այս ուսուցման սկզբունքը կենտրոնանում է դպրոցի կրթական պրակտիկայում միջառարկայական կապերի նպատակային և համակարգված օգտագործման վրա՝ նպատակներին արդյունավետ հասնելու և ուսումնական խնդիրների լուծման համար:

Դասապրոցեսում միջառարկայական կապերը կարող են օգտագործվել տարբեր փուլերում՝ ըստ ուսումնասիրվող նյութի բնույթի: Միջառարկայական կապերը կարելի է օգտագործել, օրինակ, խթանման փուլում՝ նախապատրաստական զրույցի միջոցով: Այս փուլում ուսուցիչը կարող է օգտագործել ուսումնասիրվող նյութի կապը այլ գիտությունների, առարկաների հետ՝ ավելի պարզ ու հստակ պատկերացում ձևավորելու բուն նյութի վերաբերյալ, «հող նախապատրաստելու» հիմնական նյութի յուրացման համար: Միջառարկայական կապերի նպատակային օգտագործումը պետք է.

- պարտադիր լինի բոլոր ուսուցիչների համար,
- լինի միայն ուսումնական նպատակին հասնելու միջոց,
- գործադրվի միայն այն ժամանակ, երբ դրա անհրաժեշտությունը կա,
- ինքնանպատակ չլինի,
- զուգակցված լինի ուսուցման դասական ձևերի հետ,

դասի հիմնական նպատակից չշեղի աշակերտների ուշադրությունը:

Միջառարկայական կապերի տեսակները

Միջառարկայական կապերը նախ և առաջ բնութագրվում են իրենց կառուցվածքով և, քանի որ առարկայի ներքին կառուցվածքը համարվում է ձև, ապա կարող ենք առանձնացնել կապերի հետևյալ ձևերը.

1. ըստ կազմության

2. ըստ գործողության ուղղության

3. ըստ ուղղորդող տարրերի փոխգործողության ձևի

Ըստ կազմության՝ միջառարկայական կապերը ցույց են տալիս,թե ինչ է օգտագործվում, ձևափոխվում այլ ուսումնական առարկաներից՝ կոնկրետ թեմա ուսումնասիրելու ժամանակ:

Միջառարկայական կապերը, ըստ ուղղության, ցույց են տալիս,թե կոնկրետ ուսումնասիրվող ուսումնական թեմայի միջառարկայական հիմքը քանի ուսումնական առարկաներից է կազմված:

Ըստ ուղղորդող տարրերի փոխգործողության ձևի՝ միջառարկայական ինֆորմացիան օգտագործվում է երկու ձևով.

- ուղիղ կապեր - միայն բազային ուսումնական առարկայի կողմից ուսումնական թեմայի ուսումնասիրման ժամանակ,
- հակադարձ կամ վերականգնողական կապեր - տվյալ թեման համարվում է նույնպես ինֆորմացիայի ‹‹մատակարար›› այլ թեմաների և առարկաների համար:

Ըստ ժամանակային գործոնի՝ լայն տարածում ունի միջառարկայական կապերի հետևյալ դասակարգումը՝

ուղեկցվող կամ հորիզոնական կապեր. պայմանավորված են երկու առարկաների համաժամանակյա տեղեկատվական նյութերով նախորդող կամ ուղղահայաց կապեր. գործադրվում են ուսումնական տարվահամեմատաբար կարճ, բայց հաջորդական ժամանակաշրջաններում (քառորդներ, կիսամյակներ) երկու առարկաների տեղեկատվական նյութեր ուսումնասիրելիս,

հեռանկարային կապեր. պայմանավորված են մի քանի առարկաների այնպիսի տեղեկատվական նյութով, որ գործում է առավել Ըստ ժամանակային գործոնի՝ լայն տարածում ունի միջառարկայական կապերի հետևյալ դասակարգումը՝

- ուղեկցվող կամ հորիզոնական կապեր. պայմանավորված են երկու առարկաների համաժամանակյա տեղեկատվական նյութերով,
- նախորդող կամ ուղղահայաց կապեր. գործադրվում են ուսումնական տարվա համեմատաբար կարճ, բայց հաջորդական ժամանակաշրջաններում (քառորդներ, կիսամյակներ) երկու առարկաների տեղեկատվական նյութեր ուսումնասիրելիս,
- հեռանկարային կապեր. պայմանավորված են մի քանի առարկաների այնպիսի տեղեկատվական նյութով, որ գործում է առավել երկար ժամանակ՝ 1-3 տարի,

Ինտեգրված դաս

Ի՞նչ է ինտեգրված դասը <> (Interg- ամբողջ) - լատիներենից թարգմանաբար նշանակում է ՝ վերականգնում համալրում , մասերի միավորում մեկ ամբողջի մեջ՝ ոչ թե մեխանիկորեն , այլ փոխադարձ ներթափանցում: Այսօրվա դպրոցում ուսուցումը կազմակերպվում է առանձին առարկաներից ծրագրային գիտելիքների հաղորդման եղանակով, ինչը առանձին առարկաներից տրվող գիտելիքների ամբողջություն չէ, հետևաբար աշխարհի մասին տալիս է մասնատված, ոչ ամբողջական պատկերացում: Համաշխարհային մանկավարժական միտքը վկայում է, որ ուսուցման այս ձևը արդյունավետ չէ, և իբրև խնդրի լուծման ելք՝ առաջադրում է ինտեգրված ուսուցումը, որը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթի ընկալմանը, գիտակցմանն ու յուրացմանը: Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնվում են մեկ այլ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն: Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են միավորված (ինտեգրված) ծրագրերի հետևյալտեսակները. Որպես միավորող առանցք՝ հաճախ հանդես է գալիս որևէ թեմա, որն ընգրկում է մի քանի առարկա: 70-80-ական թվականներին ի հայտ եկան միջառարկայական կապերի և ուսուցման գործընթացում դրանց գործնական կիրառության յուրահատուկ դրսևորումներ՝ դասերի նորտիպեր, մասնավորապես՝ ինտեգրված դասեր, որոնք այլ կերպ կոչվեցին բինար, սինթետիկ, համատեղ դասեր: Ինտեգրված դասերի առաջացմանը և զարգացմանը անդրադարձ է կատարվել

«Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ» ձեռնարկում: Այստեղ նշվում է, որ ինտեգրված դասերի հեղինակը գերմանացի փիլիսոփա և մանկավարժ Յոհան Ֆրիդրիխ Հերբարտն էր, նրան հաջորդել են Ջոն Դյուին, Ջեյմս Բինը: 1 Ինտեգրված դասերը ժամանակակից ուսուցման մեթոդների նորույթներից մեկն են: Այս տիպի դասերը կարելի է անցկացնել տարբեր առարկաներից: Ինտեգրված դասերը միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը ստեղծում միջառարկայական կապերով հարուստ դասերի օրինակներ: Կրթական համակարգում շարունակաբար կատարվող բարեփոխումները պահանջում են նոր մեթոդոլոգիական մոտեցում կազմակերպչական և բովանդակային նշանակության խնդիրների լուծման ժամանակ, որը կնպաստի կրթության որակի բարձրացմանը: Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս /Դավթյան Մ., Գրիգորյան Ք., Արնաուդյան Ա., Զոհրաբյան., Հովհաննիսյան Գ., Օհանովա Ի., Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ (Ձեռնարկ ուսուցրիչների համար), Երևան 2007, էջ 58 5 / որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ ու մեթոդներ: Օրինակ՝ կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկայի ուսուցման մեթոդները, ինչպես նաև կարելի է ինտեգրել տարբեր առարկաների ուսուցման մեթոդիկաները՝ պահպանելով մեկ առարկայի բովանդակությունը: Սակայն ինտեգրված դասեր ուսուցիչներն այդքան էլ հաճախ չեն կիրառում: Դրանք հիմնականում կիրառվում են հետևյալ դեպքերում.

1. երբ հայտնաբերվում են միևնույն նյութի կրկնությունը տարբեր ուսումնական առարկաներում և դասագրքերում,
2. թեմայի ուսումնասիրության ժամանակի խնայողության դեպքում՝ ցանկանալով օգտվել մեկից ավելի առարկաների պատրաստի բովանդակությունից,
3. այնպիսի ընդհանրացված հասկացությունների (շարժում, ժամանակ, զարգացում, մեծություն և այլն), օրենքների, սկզբունքների ուսումնասիրության ժամանակ, որոնք ներառում են մարդկային կյանքի և գործունեության ամենատարբերասպեկտներ,
4. երբ ուսումնասիրվող նյութը դուրս է գալիս ուսուցանվող առարկայի ծրագ

րի շրջանակներից,

5. առարկայի դասավանդման ժամանակ պրոբլեմադիր և զարգացնող ուսուցում իրականացնելու ժամանակ: Ինտեգրված դասերի հենքը միջառարկայական կապերի հաստատումն է և առարկաների «հոլիստիկ» ընկալումը:

Ուսումնական ծրագրի ինտեգրման գործընթացին բնորոշ է 4 հիմնական գիծ.

1. Աշակերտները և ուսուցիչները համատեղ պլանավորում են ուսումնական ծրագիրը և դրա իրագործման կարգը:

2. Ուսումնառության հիմքը թեմաներն են:

3. Ուսումնառությունն ընթանում է դպրոցական համայնքում ժողովրդավարական սկզբունքով:

4. Ուսումանական ծրագիրն այլևս կազմված չէ առանձին առարկաներից Ինտեգրված դասի հիմնական նյութը դառնում է դասի համակարգային նշանակության բաղադրիչը: Համակարգային կարող է լինել ինտեգրված դասի միայն այն հատվածը, որը որոշում է առաջադրանքի նպատակը: Նման բաղադրիչներ են դառնում առանձին հասկացությունները, կանոնները, օրենքները, գաղափարները, մեթոդները կամ ուսումնառության միջոցները: Ինտեգրման ձևը կախված է դասի նպատակից և համակարգային բաղադրիչի ընտրությունից:

Ինտեգրված դասերի տեսակները

Յուրաքանչյուր դասի ընթացքում ուսուցիչը պիտի ապահովի գիտելիքի ինտեգրման բազմաթիվ դրվագներ: Այդ ինտեգրումը կարող է հանդես գալ ինչպես ներառարկայական, այնպես էլ միջառարկայական կապերի դրսևորմամբ: Վերջինիս ապահովումը լայն հնարավորություն է բացում աշակերտի անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացման համար, քանի որ ժամանակակից պատկերացմամբ դպրոցը երեխային ոչ միայն պետք է սովորեցնի մտածել և գրագետ խոսել, այլև իմացածը կյանքում կիրառել:

Ուսումնական ծրագրերի ինտեգրման գործընթացում ձևավորված է երեք մոտեցում՝ միջառարկայական, բազմաառարկայական, անդրառարկայական: Միջառարկայական կապերի ինտեգրումը իրականացվում է երկու տարբեր առարկաների միջև: Միջառարկայական կապերի ինտեգրումը մայրենի լեզվի ուսուցչին հնարավորություն է ընձեռում լրացնել աշակերտների գիտելիքների պակասը՝ պատմությունից, հայրենի բնությունից, երաժշտությունից ու

նկարչությունից: Ուսուցման այս ռազմավարությունը նպաստում է աշակերտների բազմաբնույթ մտածողության զարգացմանը: Նրանց առջև լայն հնարավություն է ստեղծվում առարկաների միջև առկա կապերի ցուցադրմամբ հաղորդակցվել գիտության ու կյանքի տարբեր բնագավառների զանազան երևույթներին, պատճառահետևանքային կապերին և օրինաչափություններին: Այդ ճանապարհով նրանք աստիճանաբար վարժվում են ինքնուրույն աշխատանքի, որը կարևոր ուղենիշ է դառնալու՝ նրանց հետագա ամբողջ կյանքի ընթացքում շարունակական կրթության խոչընդոտները հաղթահարելու, ինքնուրույն ուսուցման, կատարելագործման ու բազնակողմանի զարգացման առումով: Քիչ չէ այն ուսուցիչների թիվը, ովքեր գերադասում են աշխատել միայն ավանդական մեթոդներով: Նրանք դժվարությամբ են ընդունում բարեփոխումներով պայմանավորված նորը:

Բազմաառարկայական ինտեգրումը իրականացվում է երկուսից ավելի առարկաների միջև, օրինակ՝ Մայրենի-կերպարվեստ-երաժշտություն:

Անդրառարկայական ինտեգրումը իրականացվում է մասնագիտական կրթության ժամանակ, օրինակ՝ միևնույն թեման տարբեր դասարանների ծրագրով համադրելիս: Ինտեգրացված դասերը հզոր խթան են հանդիսանում սովորողի հոգեկան գործունեության մեջ: Սովորողները սկսում են վերլուծել, համեմատել, որոնել երկու օբյեկտների ու երևույթների միջև կապը: Այն հոգնածությունը, ձանձրույթը, որը սովորողների մոտ նկատվում է միանման դասից, վերանում է, այս դեպքում դասը առաջացնում է հետաքրքրություն և աշխուժություն: Աշակերտների արձագանքը ինտեգրված ուսումնական ծրագրերին շատ դրական է: Նրանք շատ են ոգևորվում իրենց ուսումնառությամբ, ընդ որում՝ թե՛ ուսուցիչները և թե՛ սովորողների արդեն իրենց ուշադրության կիզակետում պահում են երեք տարբեր թիրախ-նպատակներ՝ ուսուցման բովանդակություն, հասարակության մեջ շփվելու հմտությունների ձեռքբերում և հետաքրքիր գործունեություն կազմակերպելու կարողություն:

Ինտեգրված դասերը հաճախ ուղեկցվում են բացահայտումներով ու հայտնագործություններով, առաջ է գալիս ստեղծականությունը, հետազոտական նաև նախագծային աշխատանքը: Բացի վերը նշվածից, այս տեսակ դասերը ստեղծագործ ուսուցչին հնարավորություն են տալիս հասնել նոր մակարդակի, բացահայտել իր համար տեղեկություններ, մտնել նոր փուլ, իսկ սովորողին՝ զարգացնել ստեղծագործական մտածողությունը, ինքնակրթվելու հնարավորություն ստեղծել: Ընդ որում, ուսումնական նյութերը պետք է լինեն մատչելի, ոչ

ծանրաբեռնված, դասարանում ուսումնական գործընթացը պետք է համապատասանի սահմանային ծավալին: Սովորողը պետք է ստանա այնքան տեղեկություն, որ չխճճվի նյութերում:

Ինտեգրված ուսուցմամբ դասապրոցեսի իրականացումը բնութագրվում է մի շարք օրինաչափություններով, որոնցից մասնավորապես առանձնացնենք հետևյալները՝

• դասապրոցեսի ընթացքը ըստ մանկավարժի հեղինակային մտածողությամբ իրականացված սցենարի,

• դասապրոցեսի բոլոր փուլերի և բաղադրիչների տրամաբանական կապվածությունը և նրա ծավալումը առանցքային թեմայի շուրջ,

• դասի համար ընտրված դիդակտիկ նյութի շղթայում դասագրքային և լրացուցիչ գրականության հասկացությունների ու գաղափարների համադրումը,

• դասապրոցեսի անցկացումը ինչպես մեկ, այնպես էլ ավելի ուսուցիչների մասնակցությամբ, որոնք կարող են հանդես գալ որպես խորհրդատու-մանկավարժներ: Արդյունավետ դասերը նաև լեզվական կողմնորոշում են, որոնք սովորաբար ունեն համեմատական բնույթ, օրինակ, որոշակի առումով, հայերենիքերականություն և անգլերեն լեզու:

• Միջնակարգ կրթության ժամանակակից կողմնորոշումը սերտորեն կապված է համակարգչային և ժամանակից տեխնոլոգիաներին: Այնպես որ, դասերը, միանշանակ, ինտեգրված են համակարգչային գիտությանը, որով ամրապնդում են նոր գիտելիքները անհատական համակարգչային ուսուցման համար: Ժամանակակից սովորողները մեծ հաճույքով են աշխատում համակարգչով, որն էլ դասը դարձնում է ավելի հետաքրքրաշարժ:

Ժամանակակից մանկավարժության մեջ ինտեգրված ուսուցումը ներկայացվում է նոր դիտարկումներով: Այն իր բնույթով զարգացնող է, բովանդակությամբ՝ բազմաբաղադրատարր, որը ներառում է թե՛ զարգացման սահմանափակ հնարավորություններ ունեցող սովորողներին, թե՛ միջառարկայական կապերի կիրառումը, թե՛ բազմահամակազմային դասարաններում իրականացվող գործընթացները: Ինչպես նշում է Ե. Ա. Եկժանովան, «Ինտեգրված ուսուցումը, հիմնվելով հատուկ և ընդհանուր կրթության սկզբունքների վրա, պետք է ունենա զարգացնող, դաստիարակող բնութագիր, որը ենթադրում է սովորողների բարոյական գաղափարների, վարքի համարժեք ձևերի մշակում՝ բոլոր մասնակիցների ներառմամբ կրթական գործընթացում»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ, ըստ. Վ. Վ. Կրաևսկու, դպրոցականների առաջադիմության անկումը գլոբալ խնդիր է, որի լուծման համար անհրաժեշտ է գիտական մոտեցում, ընդ որում՝ ոչ միայն մանկավարժական, պետք է նշենք, որ ավելի է կարևորվում ինտեգրված ուսուցման կիրառումը՝ որպես կրթության որակի բարձրացման գործոն:

Փորձարարական մաս

Ներկայացնում եմ միջառարկայական կապերով հարուստ մի քանի դասի օրինակ.

Դաս 1

Ռուսաց լեզու 5-րդ դասարան

Թեմա՝ «Ինչպես է հոբբին դառնում մասնագիտություն»

Նպատակը. Աշակերտի մոտ ձևավորել հոբբիի գաղափարը, կենտրոնացնել նրան սեփական հետաքրքրությունների վրա:

Ակնկալվող վերջնարդյունքները.

Աշակերտը կկարողանա կարճ երկխոսություն վարել անձնական հակումների մասին, համառոտ նկարագրել ի՞նչ է հոբբին և մասնագիտությունը:

Դասի խնդիրները- հարց ու պատասխան՝ աշակերտների սիրած զբաղմունքի մասին:

Զրույց-քննարկում՝ ռուս և հայ գրողների հոբբիների մասին:

Ինքնուրույն ընթերցանություն՝Ինչպես է հոբբին դառնում մասնագիտություն»:

Միջառարկայական կապ.

ռուս գրականություն- հայ գրականություն

ռուսաց/հայոց/ լեզու- պատմություն

ռուսաց լեզու-ԹԳՀԳ

Դասի ընթացքը.

Դասի կազմակերպական մասից հետո /3րոպե/ աշակերտները սիրով ներկայացրին իրենց հետաքրքրող զբաղմունքները /հոբբին/, նրանցից մի քանիսը նույնիսկ տնից բերել էին իրենց ձեռքի աշխատանքները, որոնցով դասարանում նախապես փոքրիկ ցուցահանդես էին կազմակերպել:

Աշակերտներն արտահայտվում էին ռուսաց լեզվով, իսկ որոշ բառեր, որ չէին կարողանում հիշել, փոխարենը հայերեն հոմանիշն էին ասում կամ փորձում էին բառի բացատրությունն այլ կերպ ներկայացնել:

Սիրած զբաղմունքները ներկայացնելուց հետո աշակերտներն անդրադարձան Լ. Տոլստոյի, Պուշկինի, Չեխովի, Լերմոնտովի հոբբիներին/ դասանյությում կար նրանց մասին/:

Աշակերտներին խմբերի բաժանելուց հետո ինքնուրույն ընթերցանության համար հատկացված դասանյութը բաժանեցի մասերի, համարակալեցի և պատահականության սկզբունքով տրամադրեցի երեխաներին: Տեքստը հայերեն էր, երեխաները պետք է թարգմանեին ռուսերեն: Երեխաների աշխատանքը դյուրին դարձնելու համար տեքստի պատմությունը փոքրիկ տեսանյութի ձևով ներկայացրի նրանց ուշադրությանը: Աշակերտները սիրով դիտեցին 5րոպեանոց փոքրիկ տեսանյութն ու հատկացված ժամանակահատվածում թարգմանեցին տեքստից իրենց հատկացված հատվածը:

Չեմ կարող ասել, որ առաջադրանքը լիարժեք կատարված էր, բայց վստահաբար կարող եմ նշել, որ բոլորն անխտիր մոտիվացված էին, կարողացել էին կենտրոնանալ տեքստի « բանալի» բառերի վրա:

Վերջում երեխաներն ինքնագնահատում արեցին, լրացրին ելքի քարտը.

«Նշեք 1 բան, որ լավ ստացվեց,

Նշեք 1 բան, որ չկարողացաք,

Նշեք 1 բան, որ կուզենայիք նորից անդրադառնալ»:

Տանը հանձնարարվեց՝ օգտվելով հանրագիտարանից կամ համացանցից, մի քանի նախադասությամբ ներկայացնել սիրած հայ գրողի հոբբին:

Դաս 2

Ռուսաց լեզու 9- րդ դասարան

Թեմա՝ «Մշակույթը և քաղաքակրթությունը»

Նպատակը. լսել և հասկանալ պարզ խոսքը , նախադասությունը տվյալ թեմայի շուրջ

Ակնկալվող վերջնարդյունքները. կիմանա հին ու նոր քաղաքակրթությունների մասին, կկատարի վերլուծություն: Կգտնի բանալի բառը, կխոսի թեմայի շուրջ, կթարգմանի:

Դասի խնդիրները- Ներկայացնել հին և նոր Եգիպտոսի, հին և նոր Հունաստանի, հին ու

նոր Հռոմի/ Իտալիայի/ պատմությունը, մշակույթն ու քաղաքակրթությունը:

Միջառարկայական կապ.

ռուս գրականություն- հայոց պատմություն

ռուսաց/հայոց/ լեզու- համաշխարհային պատմություն

ռուսաց լեզու-ԹԳՀԳ

Դասի ընթացքը.

Դասի կազմակերպական մասից հետո /3րոպե/ աշակերտների հետ միասին կազմեցինք սահիկների գնահատման ռուբրիկ.նշեցինք գնահատման չափանիշները.

1/Պատմական տեղեկությունների ստույգությունը;

2/Ժամանակագրության ճիշտ հաջորդականությունը:

3/Սահիկի կառուցվածի ձևաչափը:

4/ Սահիկների գեղարվեստական կողմը և գրագիտությունը:

Աշակերտները ներկայացրին իրենց խմբի անդամներին և պետությունը, որի մասին պետք է խոսեին: Նախորդ ժ որպես տնային աշխատանք հանձնարարվել էին վերոնշյալ պետությունները, խմբերի բաժանումը, նյութի բաշխումը երեխաները կատարել էին ինքնուրույն: Աշակերտները բաժանվել էին 4 հոգուց բաղկացած տարասեռ խմբերի: Խմբերի ուժերը հավասարազոր էին բաշխել/ ի զարմանս ինձ/ :Խմբերից յուրաքանչյուրը տվյալ պետության վերաբերյալ սահիկաշար էր պատրաստել, ընդ որում բաժանել էր 2 մասի՝ հին և նոր:

Աշակերտները հերթով ներկայացրին սահիկները, մեկնաբանեցին, ժամանակագրությունը կապեցին Հայաստանի, Հայոց պատմության հետ:

Սահիկաշարերի բովանդակությունն անչափ հետաքրքիր էր և ինքնատիպ: Ներկայացրել էին պետության խորհրդանիշները, տարազը, խոհանոցը, նշանավոր դեմքերին, իրադարձությունները և այլն : Սահիկաշարերը պատրաստելիս աշակերտները շռայլորեն կիրառել էին համաշխարհային և հայոց պատմությունների և ԹԳՀԳ-ի գիտելիքների «զինանոցը»:

Աշակերտները գրագետ և հստակ արտահայտվում էին ռուսաց լեզվով: Մի թիմը ներկայացնում էր, մյուսը՝ թարգմանում. հիմնականում կարողանում էին թարգմանել՝ օգտվելով բանալի բառերից:

Վերջում երեխաները փոխադարձ գնահատում արեցին, լրացրին ելքի քարտը.

- Նշեք 3 բան, որ լավ ստացվեց,
- Նշեք 2 բան, որ դժվարացաք,
- Նշեք 1 բան, որ կուզենայիք վերանայել:

Եզրակացություն

Իմ ուսումնասիրության արդյունքում ես եկել եմ հետևյալ եզրահանգումներին.

- Ռուսաց լեզվի դասավանդման գործընթացում միջառարկայական կապերի հաստատումը «մայրենիի» հետ ձևավորում և զարգացնում է լեզվական գիտելիքների կիրառման և հաղորդակցման հմտություններ և կարողություններ, բարելավում է քերականական նյութի յուրացումը:
- Կապը Հայոց պատմություն առարկայի հետ ձևավորում է միջմշակութային իրազեկության և բազմազանության նկատմամբ հարգալից վերաբերմունք:
- Համաշխարհային պատմության հետ միջառարկայական կապը հնարավորություն է տալիս աշակերտին ընդլայնել աշխարհայացքը, տիրապետել ռուսաց լեզվով նյութի եզրույթաբանությանը, հարստացնել բառապաշարը:

Առաջարկություն

Ռուսաց լեզվի, ռուս մշակույթի դերն ու նշանակությունը երեխաների համար առավել կարևորելու համար առաջարկում եմ դասերը մշտապես իրականացնել միջառարկայական կապերի շեշտադրմամբ: Օգտագործել ՏՀՏ գործիքները: Դասապրոցեսին ժամանակ հատկացնել ռուսաց լեզվով տարաբնույթ երկխոսություններին, երբեմն երկխոսության թեման առաջարկել հանպատրաստից: Երկխոսության թեմաներն ընտրելիս հաշվի առնել աշակերտների նախասիրություններն ու տարիքային առանձնահատկությունները; Կարևոր է, որ երեխաները կարողանան տիրապետել առօրյա հաղորդակցության համար գործածվող անհրաժեշտ բառապաշարին, գրագետ ձևակերպված խոսքին: Աշակերտների լեզվական բառապաշարը հարստացնելու համար հատուկ ուշադրություն դարձնել դասանյութի «բանալի» բառերին, դրանց թարգմանություններին, որոշ դեպքերում/ ինչու՞ ոչ/ նույնիսկ ստուգաբանությանը:

Գրականության ցանկ

1. Նոր ՀՊՉ Երևան-2020թ.

2. Байкова Л.А., Гребенкина Л.К. Педагогическое мастерство и педагогические технологии. – М., 2000

3. Битинас Б.П. Структура процесса воспитания. – Каунас, 1984

4. Вульфов Б. Основы педагогики / Б.З. Вульфов, В.Д. Иванов. – М., 1999

5. . Джуринский А.Н. Развитие образования в современном мире. – М., 1999